

ՄԱՍԻԿՈՆ ԳԱՍԴԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ

(ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ)

ԴԱՍԱԳԻՐԸ

ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

491.99-5

9- - 31

ՊԵՏՏՐԱՏ

1936

ՅԵՐԵՎԱՆ

6095

H A P M.
2-10062

04 MAY 2010

Հասցեագրված է
ՀԽՍՀ Լուսավորության Ժողովրդական կոմիտեի Կոլմից

ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ
491.99-5
9-31

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

3802

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ
ԽՈՍԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

ԴԱՍԱԳԻՐՔ
ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ-1936


14 MAR 2013

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

I. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

(Վերջապեսի գործածությունը)

1. Արտագրեցեք նախադասությունները նկարների կարգով:



Բանվորուհին կոշիկ է կարում:
Կոլտնտեսականները հնձում են դաշտը:

* բանվորուհի, կոլտնտեսականներ

Բառերի այն կապակցությունը, վոր արտահայտում է ամբողջացած միտք, կոչվում է նախադասություն:



4143-87

2. Արտագրեցեք միայն կոլսնեստակաճններին վերաբերող նախադասությունները:

Կոլտնտեսականները վարում են տրակտորով:

Առաջավոր բանվորներն աշխատում են ստախանովյան նոր ձեվերով:

Կոլտնտեսականները հնձում են հնձող մեքենայով:

Ստախանովական բանվորները բարձր աշխատավարձ են ստանում:

Հարվածային կոլտնտեսականներն ունեվոր են դառնում:

* աշխատավարձ, հարվածային, բարձր

3. Արտագրեցեք և ամեն մի նախադասության մեջ ընդգծեցեք այն բառը, վորից հետո կադդալիս դադար եք առնում:

Կոմբայնավարներն աշխատեցին:

Կոմբայնավարներն աշխատեցին դաշտում:

Կիսագրագետները գնում են դպրոց սովորելու:

Կիսագրագետները գնում են դպրոց:

* կիսագրագետ, դպրոց

Նախադասության վերջում դադար ե լինում:

Գրելիս այդ դադարի փոխարեն գնում ենք վերջակես:

4. Կարդացեք նախադասությունները՝ կետերի տեղը բաց քաղած բառերն ավելացնելով:

Արտագրեցեք և ամեն մի նախադասությունից հետո վերջակես դրեք:

Ապրում ենք ուրախ և յերջանիկ կյանքով

Հոկտեմբերյան շրջանում կոլտնտեսականները կդմինգրբաժածկ տներ են.....

Թալին գյուղում կա կուլտուրայի և հանգստի.....

Յերեվանում ավարտվում ե պիոներական պալատի.....

(կառուցում, պարկ, շենք)

* Դմինգրբ, պիոներ, հոկտեմբերյան, յերջանիկ

Վերնագրի առաջին բառն սկսում ենք մեծատառով:


Նախադասության առաջին բառն սկսում ենք մեծատառով:

5. Դիտեցեք նկարները:

Այդ նկարներին վերաբերող նախադասությունները դիտմամբ խառն կարգով են տպված:

Պատմվածք ստանալու համար նախադասությունները կարդացեք նկարների կարգով և ապա՝ արտագրեցեք:





Ազատվեցին

Խորհրդային սառցահատն ազատեց նրանց:
Մեր հերոս ողաչունները հայտնաբերեցին անհետացող ձկնորսներին:

Հետո հյուսիսում փոթորիկի ժամանակ սառույցի կտորը ձկնորսներին հեռացրեց ծովափից:

* Խորհրդային, վորսորդ, ողաչու, սառույց, սառցահատ

6. Կարգացե՛ք հետևյալ նախադասությունները:

Վոչխարը ծածկված է բրդով: Հիմա ավելի հեշտ է զարձել ապրելը: Ոձը ֆշռում է:

1. Այս նախադասություններից պատկերացե՛ք ստացվեց:

2. Իսկ յեթե նախադասությունների տեղերը փոփոխենք, պատմվածք կստացվի:

Պատմվածքը կազմվում է նախադասություններից:

Պատմվածքի մեջ նախադասությունները պետք է լինեն

1. մեկով իրար հետ կապված լինելով

2. վրոգ կարգով դասավորված:

7. Ինքներդ գրե՛ք վերնագիր և ապա՝ արտագրեցե՛ք նախադասությունները ճիշտ կարգով:

Կոլտնտեսությունը նրան պատեֆոն նվիրեց:

1 35 թ. նա ամեն մի կովից ստացավ 18 ցենտներ կաթ: Միբուշը խնամում է կթում էր ֆերմայի կովերից 11-ը:

* Կոլտնտեսություն, ցենտներ, ֆերմա

8. Այս պատմվածքի մեջ ամեն մի նախադասությունից հետո վերջակետի տեղը գուցահեռ գծիկներ են դրված:

Արտագրեցե՛ք. գծիկների տեղը վերջակետի դրե՛ք և վերջակետից հետո մեծատառով սկսեցե՛ք:

Աճում է մեր յերկրի անասնապահությունը

Այժմ կոլտնտեսային կարգերը վեջնականապես հաղթել են գյուղում || մենք ունենք ամուր ֆերմաներ || Հայաստանը դառնում է կուլտուրական անասնապահության յերկիր ||

Կարգ, վերջ, հաղթել, Հայաստան, ատաղնակարգ, անասնապահություն:

9. Կարգացե՛ք պատմվածքը և բաժանեցե՛ք նախադասությունների:

Արտագրեցե՛ք: Ամեն մի նախադասության վերջում վերջակետի դրե՛ք և վերջակետից հետո մեծատառով սկսեցե՛ք:

Մեր յերկիրը դառնում է բարձր կուլտուրայի յերկիր

Մարդներում կառուցվում են լուսառատ և հոգեկապ տներ գյուղացիութունը նոր կյանք է սկսում կուլտուրական բնակարաններում ծաղկում են զարթոնները, գրականությունը թատրոնը, լեռնաշխարհները:

* հոգեկապ, գյուղացիություն, սկսել, բնակարաններ

10. Դրեցե՛ք ձեր համառոտ կենսագրությունը: Ամեն մի հարցին պատասխանեցե՛ք մեկ նախադասությամբ:

Հա ր ց ե ր

- 1) ՅՔԲԵ և ՎձԲԵԿԵ և ծնվել:
 - 2) Ինչձվ ելին պարապում ծնողներդ:
 - 3) ՎձԲԵԿԵ և անցկացրել մանկութունդ:
 - 4) ՅՔԲԵ և ՎԵԲԵԿԵԼ անգրագիտությունդ:
 - 5) Ինչձվ և պարապում այժմ:
 - 6) ՎձԲԵԿԵ և աշխատում:
- Որինակ՝ Յես ծնվել եմ 1917 թ. Ստեփանավանում:

Գրելիս չմոռանաք՝

Վերնագիրը սկսել մեծատառով:
Նախադասութունն սկսել մեծատառով:
Նախադասության վերջում վերջակետ դնել:

II. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

11. Արտագրեցեք հարցաթերթը և ընդգծեցեք հարցական բառերը:

Յերկրորդ անգամ արտագրեցեք միայն հարցերը և դրեցեք ձեռնունը, ազգանունը...

Հ ա ր ց ա թ ե ր թ

Անձնդ. —

Ազգանձնդ. —

Քանի տարեկան ես. —

Կուսակցական ես, թե՛ վոչ. —

Յերբ ևս կիսագրագետ դարձել. — 1932 թվին

Արիթմ

Ներսիսյան

41

Այո

Հարցական նշան (?)

Հարցական բառի վերջին ձայնավորի վրա հարցական նշան ե դրվում:

12. Արտագրեցեք հարցերը և ապա՝ գրեցեք պատասխանները նույն բառերով:

Ձմռանաք հարցական բառի վրա հարցական նշան դնել:

Աշնան նշանները

Հ ա ր ց ե ր

Պատասխաններ

- | | |
|---|-----------------------------------|
| 1) Ծառերի տերեփերը
դեղնում են: | 1) ծառերի տերեփերը
դեղնում են: |
| 2) Դաշտերը մերկանում են: | 2) |
| 3) Թռչունները չվում են
առաք լեռկերներ: | 3) |
| 4) Բարակ անձրե՛վ ե
մալում: | 4) |

13. Այս պատասխանների համար ինքներդ հարցեր դրեցեք:

Հ ա ր ց ե ր

Պատասխաններ

- | | |
|--------------|------------------------------------|
| 1) | Ընկ. Ստալինը ծնվել է 1879 թվին: |
| 2) | Նա ծնվել է Վրաստանի Գորի քաղաքում: |

14. Արտագրեցեք և ընդգծեցեք բառերի ուժեղ արտասանվող վանկերը:

Կոչեր

Պրոլետարներ բոլոր լեռկերներ, միացե՛ք, Բաճր պահեցե՛ք կարմիր դրոշակները: Ոգնեցե՛ք Փաշիզմի զոհերին:

* ոգնել, պրոլետար

Շ ե տ (')

Բառի ուժեղ արտասանվող վանկի ձայնավորի վրա շեռ ե դրվում:

15. Արտագրեցեք, չմոռանաք շեշտերը դնելը

Տուֆի յերգը

Զինվել ես ջահերով լուսե,
Արթիկ, վարդագույն Արթիկ,
Կըծքիդ կարմիր տուֆ ե բուսել՝
Պաշտոն՝ մալխայան վարդից:

Արթիկ, վարդաբար Արթիկ,
Հենվել ես փեշին Մանթաշի.
Վորպես բարձրացող բարտի,
Աճի՛ր ու հզոր բոլ քաշիր:

* վարդագույն, մալխայան, բարտի

16. Արտագրեցեք և ինքներդ ընդգծված բառերի վրա
բաց քղած շեշտերը դրեք:

Ջան բամբակ

Խորհրդային արեվը
Քեզ կյանք տվեց, իմ բամբակ.
Բանվորական թեվերը
Քեզ բոլ տվին, ջան բամբակ:

Մեր բառեկամ ու ընկեր,
Բուլլեվիկ ես, մեր բամբակ.
Դու մեր կամքով ես լեկել՝
Բացվիր, լցվիր, հեյ բամբակ:

*) Խորհրդային, բամբակ

17. Արտագրեցեք և ընդգծեցեք յերկառ առաստանվող բա-
ռերը:

Խորհրդային զարուհ

Հովտում առուն խոլո՞ղում ե գլղլալեն անո՞ւշ, անո՞ւշ.
Քամին բարակ շնկչնկում ե գլղլալեն անո՞ւշ, անո՞ւշ:
Կյանքը վորքան ե խնդուն,
— Ջան, խորհրդային զարուհ:

Բացականչական նշան (")

Բառի յերկար արտասանվող վանկի ձայ-
նավորի վրա բացականչական նշան ե դրվում:

18. Արտագրեցեք և ընդգծեցեք այն բառերը, վորոնց վրա
բացականչական նշան ե դրված:

Լիպարիտ Մխչյանի հիշատակին

Փանք քեզ, փանք քեզ, մեր զինկով արի.
Փանք, վոր ընկար հաղթանակի ճանապարհին...
— Թե տեսնելի՛ր ինչ ե դարձել
Մեր բանակը կարմիր.

Նա աշխարհում Բանակն ե, ո՞, առաջին:

* ճանապարհ, աշխարհ

19. Արտագրեցեք և ընդգծեցեք այն բառերը, վորոնց վրա
եւեթ, հարցական կամ բացականչական նշան ե դրված:

Դժվար տարի

Վարի, գութան ջան, վարի,
Շատ ե դժվար ես տարի:
Պապին տարան քյոխվի դուռ,
Հարկ են ուզում.— Տո՛ւր հա, տո՛ւր...
— Կաամ, քյոխվա, փող չունեմ...
— Զուհե՛ս, Շեկոն կտանեմ:
— Աման քյոխվա, քեզ դուրբան,
Շեկոն գնա թող՝ գութան,
Գարնան անենք վարուցանք,
Կալը կախենք, բերենք, տանք:
Գարունը լեռ դառավ ել,
Գութան լծվեց — հորովել...

Վարի, գութան ջան, վարի,
Դատենք ցորեն ու գարի,
Տանենք, ածենք քրիվի փեշ,
Վոր չտանի մեր գոմեշ:

* Նեկո

Շեշտը (')
հարցական նշանը (^),
բացականչական (°)
առողջանության նշաններ են:

20. Արտադրեցեք և զրեք բաց քողած առողանության նշանները շեղադրով ապված բառերի վրա:

Եյ, հաղար-հաղար լույսեր ելեկարյան...
Յեվ դուք, աշխարհի գեղեցկուհիներ՝
Հաղթ մեքենաներ ու գործարաններ...
Ինք, նավեր, ջրեր, յերկաթուղիներ,
Հանքեր ու ցանքեր...
Ձմեռը թատրոններ, լուսավոր տներ...
— Ո՛ւմ եք պատկանում:

• գեղեցկուհիներ, չքնաղ, գործարաններ

III. ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

21. Արտադրեցեք միայն ութ բառից կազմված նախադասություններ:

ԿՈՒՐԱՆՈՒՆԱՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՂԱՏԱԳՐԵՑ ԿՆՈՂՐ

Կուրանտեսային կյանքը աշխատանքը հարգանքի արժանի գործ դարձրեց: Միայն այդ կյանքը իսկական հերոսուհիներ ծնեց զյուզում: Կուրանտեսային աշխարհում աղատագրեց կնոջը և նրան ինքնուրույն դարձրեց: Այսպիսով կուրանտեսային կարգը աշխատավոր կնոջը հավասար դարձրեց ամեն մի աշխատավոր տղամարդու:

* կնոջ, դարձրեց, տղամարդ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ ԿԱԶՄՎՈՒՄ Ե ԲԱՌԵՐԻՑ:

22. Բառերն իրար հետ այնպես կապակցեցեք, վոր կանոնավոր նախադասություններ ստացվեն:

Ո՛վ ինչպես եւ շարժվում

Մարդը քայլում է:	Ոձերը
Ձկները լողում են:	Գորտը
Դալը	Ծիծեռնակները
(քոչում է, քոչում են.	ցատկում է, ցատկում են.
սողում է, սողում են.	վազում է, վազում են.

23. Կետերի տեղը այնպիսի բառեր գրեք, վոր կանոնավոր կապակցվեն արված բառերի հետ:

Ո՛վ ինչ եւ անում

Ուսուցիչը	սովորեցնում է:
Աշակերտները	սովորում են:
.	քար եւ տաշում:
.	հաց են թխում:
.	կոշիկ եւ կարում:
.	հիվանդներին են բժշկում:

(բժիշկը, բժիշկները, կոեկախարը, կոեկախարները, հացքուխը, հացքուխները, ֆարսաքը, ֆարսաքները)

24. Բառերն իրար հետ այնպես կապակցեցե՞ք, Վոր կանոնավոր նախադասութիւններ ստացվեն:

Յես	Մենք
Դու	Դուք
Նա	Նրանք

(գրում ենք, գրում են, գրում եմ, գրում ե, գրում ես, գրում եմ)

25. Կարդացե՞ք և կետերի տեղը հարցերին հարմար բառեր դրե՞ք: Արաագրեցե՞ք:

Ակումբ

Մենք լերեկոնները հաճախում ենք (ու՞ր):

. . . . (վո՛րսեղ) լինում են դասախոսութիւններ:

Հաճախ (վո՛րսեղի՞ց) գիրք ենք վերցնում:

(ակումբից, ակումբում, ակումբ)

26. Արտագրելիս փակագծերի միջի բառերի ձևերն այնպես փոփոխեցե՞ք, Վոր կանոնավոր նախադասութիւններ ստացվեն:

Հարվածային Արամյանը

Հարվածային Արամյանը չի ուշանում (աշխատանք):

Արամյանը պալքարում է (վորակ) համար:

. . . . (Արամյան) մեքենան փալլում է:

Նա միշտ գերակատարում է (պլան):

Բանվորները հետեւում են (Արամյան):

27. Այս բառերն այնպես դասավորեցե՞ք, Վոր նախադասութիւն ստացվի:

գնելու, ուսուցչուհի, գնաց, գիրք, Աստղիկը, գրախանութ

28. Տրված ծրագրով շարադրութիւն գրեցե՞ք:

Բառերն իրար հետ այնպես կապակցեցե՞ք, Վոր կանոնավոր նախադասութիւններ ստացվեն:

Մեր կոլտնտեսութիւնը

1) Յէրբ ե կազմակերպվել ձեր կոլտնտեսութիւնը:

2) Քանի տնտեսութիւն ե մտել կոլտնտեսութիւն մեջ:

3) Ինչպէս են աշխատում կոլտնտեսականները:

4) Ունե՞ք ակումբ, մանկապարտեղ, մսուր:

5) Ի՞նչ գլուղատնտեսական մեքենաներ ունի ձեր

կոլտնտեսութիւնը:

IV. ՄԵԾԱՏԱՌԸ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՍԿԶՐՈՒՄ

29. Արտագրեցե՞ք այն բառերը, Վորոնք վերջակէսից հետ չեն, բայց մեծատառով են սկսված:

Այս վարդը տո՛ւր մեր Վարդին:

Ծեր ե պապիկը, նրան սիրում ե իր թոռ Պապիկը:

Մեր Աստղիկը կրծքին լսվել ե կարմիր աւսդիկ,

իսկ նրա ընկերուհի Հասմիկը՝ մի գեղեցիկ հաւաքիկ:

* Վարդ. վարդ. Հասմիկ. հասմիկ

Գրելիս մարդկանց անունները սկսում ենք մեծատառով:

30. Արտագրեցե՞ք:


Մեր առաջնորդները

Մեր սիրելի առաջնորդներն են Վլադիմիր Իւլիչ Լենինը և Իոսիֆ Վլասարիոնովիչ Ստալինը:

* Իւլիչ, Իոսիֆ, Վլասարիոնովիչ

Գրելիս մարդկանց հայրանունները ե ազգանունները սկսում ենք մեծատառով:

31. Արտագրեցե՞ք և ընդգծեցե՞ք բաղաժի, գլխի, գետի և ասրի անունները:



Յերեմիան քաղաքը շատ գործարաններով տեսա, Ար-
մաթիւր գլուղը բամբակով առատ տեսա, Հրազդան գետը
եղեկարակարաններով տեսա, Արագած սարը տուֆով հա-
րուտ տեսա:

* Գեղարակայաններ

Գրեւիս քաղաքների, գյուղերի, գետերի և
սարերի անուններն սկսում ենք մեծաստով:

32. Արտազրեցեք միայն շների անունները:

Շեկո, Մարալ, Կարմիր, Խնձոր, Թոփլան, Չամբար, Ղալ-
քար, Չալանի, Ալվան, Բոք:

Գրեւիս կենդանիներին տրվող անունները
նույնպէս սկսում ենք մեծաստով:

33. Արտազրեցեք քաղաքների նոք անունները:

Լենինի և Ստալինի անուններով քաղաքներ

Լենինի անունով կոչվում են հետեւյալ քաղաքները՝
Լենինգրադ (նախկին Պետրոգրադ), Լենինական (նախ-
կին Ալեքսանդրապոլ), Ուլլանովսկ (նախկին Սիմբիւսկ),
Կալին:

Ստալինի անունով կոչվում են Ստալինաբադ (Դյու-
սաւթ), Ստալինգրադ (Յարիցին), Ստալինսկ (Կուզնեցկ),
Ստալինո (Յուզովկա), Ստալինիւր (Յիսնովալի) և ուրիշ:

Մարդկանց անունները, հայրանունները,
ազգանունները, կենդանիներին տրվող անուն-
ները, քաղաքների, գյուղերի, գետերի, լեռնե-
րի և ընդհանրապէս աշխարհագրական անուն-
ները հասուկ անուններ են:

34. Արտազրեցեք միայն հատուկ անունները:

Մայիսյան ապստամբութեան զոհ՝ ըը

1920 թ. մայիսին Լենինականի, Ղարսի, Ղաղախի,
Նոր-Բայազետի բանվորներն ու գյուղացիներն ապստամ-
բեցին դաշնակիների դէմ:

Դաշնակիներն ապստամբութունը ճնշեցին:

Հնդկան աշխատավորութեան անձնվեր զավակները՝
Ալլահիերդյանը, Մուսաբեյլանը, Ղուկասյանը, Ղարիբջան-
յանը, Սարուխանյանը, Սեւոյանը և ուրիշները:

* Նոր-Բայազետ

35. Արտազրեցեք հասուկ անունները և ընդգծեցեք սկզբնա-
տուները:

Հայաստանի արդյունաբերութեանը

Ամալի տեղերում են բարձրացել Լենինականի տեքս-
տիլ և Կիրովականի քիմիական կոմբինատները, Արա-
րատի ցեմենտի գործարանը: Վերակառուցվել է Ալլահ-
իերդու և Ղափանի պղծարդյունաբերութունը: Մեր լեռ-
նային արդյունաբերութեան մեջ ստեղծված են կարեւոր
ձեռնարկութուններ՝ Արթիկ-տուֆը և Անի-պեմզան:
Յերեմիանում կառուցվել են Մեխանիկական, Կոնսերվի,
Ձեթ-ոճառի, Կարբիդի, Մարմարի, Ծխախոտի, Կարի,
Կաշիի և բազմաթիւ այլ գործարաններ: Կառուցվում է
Սինթետիկ Կաուչուկի հսկա կոմբինատը:

* քիմիական, Ալլահիերդի, Արթիկ-տուֆ, Անի-պեմզա,
Ձեթ-ոճառ

36. Արտազրեցեք: Չափերների մեջ առեք գրվածքների,
լրագրերի, հանդեսների, գործարանների, կոյտնատնութեանների
անուններն և սկսեցեք մեծաստով, չորովհետեւ դրանք նույնպէս
հասուկ անուններ են:

«Տերն ու ծառան» հերիաթ, «Հայոց լեզու» դասագիրք, «Ավանդարդ» թերթ, «Կոմունիստ» հանդես, «Կոմինտերն» գործարան, «Միություն» կոլանտեսությունը, կինո «Պրոլետար»

Չափերտների մեջ են առնվում հիմնարկների այն անունները, վորոնք առանց չափերտների այլ իմաստ ունեն. որինակ՝ «Կոմիսերն» գործարան:

37. Արտադրեցեք քաղաքի համար գրված հասցեն:

Հերելան
Վարժար փողոց № 14
Գրիգոր Վարդիկյանին

Քաղաքի համար հասցեն գրվում է այսպես

Առաջին տողում՝ քաղաքի անունը, յերկրորդ տողում՝ փողոցի անունը և №-ը, յերրորդ տողում՝ ստացողի անունն ու ազգանունը

38. Արտադրեցեք գյուղի համար գրված հասցեն:

Կիրովական

Կարմիր գյուղ

Զարուհի Սրամի Հասայանին

Ուղարկողի հասցեն. — Հերիաթ, փողոց № 23, գուռ № 62, Արար Գեղորգյան

39. Կրեցեք ձեր տան հասցեն. այլ քաղաքներում ու գյուղերում գտնվող ձեր ընկերների և ազգականների հասցեներ:

40. Արտադրեցեք այս համակր

Արեւի՛ վարդար,

Միտր յես դպրոցում չեյի, վորովհետեւ իրվանդ եմ: Հերել ցրտանի ժամանակ մրսեւ եմ. գլուխս և կոկորդս ցաւում եյին: Միտմ լաւ եմ: Խնդրում եմ, ուղարկիր ինչ վաղվա դասերը.

Սեդմում եմ շեռդ.

Քո ընկեր Միւսգ

1936 թ. հոկտեմբերի 7-ին

Վարդուհի

Նամակը գրվում է այսպես.

1. Նախ՝ վերեւում գրվում է այն մարդու անունը, վորին ուղղվում է նամակը. որին նախ՝ սիրելի՛ մայրիկ, քանգագի՛ն Աւամ:

2. Նամակի վերջում՝ աջ կողմը գրվում է նամակը գրողի ստորագրութունը, իսկ ձախ կողմը՝ մի տողում՝ տարին, ամիսը և ամսաթիվը, իսկ սրա տակը՝ տեղի (ֆաղաֆ, գյուղ) անունը, վորանեղ գրվել է նամակը:

41. Նամակ գրեցեք ձեր ընկերներին և նկարագրեցեք ձեր դպրոցի կյանքը:

42. Արտագրեցեք ալս հասցեն:

Հերետա՛ն ռարֆաի 14
ռարսրիկյանին
Անա՛րգապետ Մեկնիր
Դայի

Ուղարկողի հասցեն. — Լենինական, փողոց № 15,
տուն № 62, Հայի Ամիրյան

Հեռագիրը գրվում է այսպես.

1. Հասցեն գրում են կրճատ:

2. Հեռագիրը գրում են շատ կարճ:

3. Հեռագրի մեջ կետեր չեն դնում (յեթե հեռագիրը շատ յերկար է, և կետեր չդնելը շփոթություն առաջ կբերի, կետերը գրում են տառերով. որիննախ՝ վերջակե՛ս, ստուակե՛ս):

4. Հեռագրի մեջ չեն գրում տարին, ամիսը, ամսաթիվը և տեղը:

5. Հայաստանի սահմաններից դուրս հեռագիրը ուղարկեն պիտի գրել:

43. Խնջներդ 2—3 հեռագիր գրեցեք ձեր ծանոթների հասցեներով:

44. Ալս հեռագրերը շարագրեցեք նամակի ձեւով, ալսինքրն՝ ալեւի ընդարձակ գրեցեք և գրեք կետագրության նշանները:

1) Արամը տասին գնում է Մոսկվա հեռագրի լերը կգաս

2) Վեցին հալըիկը մեկնեց դիմավորեցեք

45. Նախորդ աշխատանքի առաջին հեռագրի պատասխանը գրեցեք հեռագրի ձեւով:

Վ. ՀԱՉՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՏԱՌԵՐ

46. Կարգացեք Արա՛, Մոսի՛ և ծուգրուդ՛ը բառերը. Յերկարացրեք բառերի վերջին պարզ ձայները՝ անյունները:



Արա՛

Մոսի՛

Ծուղրուղու՛

Բառը կազմվում է հնչյուններից:

Հնչյունի նշանը կոչվում է սառ:

Հնչյունը արտասանվում է և լսվում:

Տառը գրվում կամ ապփում է և կարգացվում:

47. Արտադրեցեք և ամեն մի բառի վերելը դրեցեք տառերի թիվը:

Անմահը

Այն ով է ասում, թե մեռավ Լենին:

Միթե կմեռնի արեվը պայծառ,

կամ թե կմարն շունչը ովկիանի:

* ովկիանոս

48. ա) Արտասանեցեք ա, ե, բ, ի, ո, ու հնչյունները:

1. Ինչպիսի գիրք է ունենում բերանն այդ հնչյուններն արտասանելու:

2. Այդ հնչյունները կարելի՞ չէ յերգելով արտասանել:

բ) Արտասանեցեք բ, գ, դ, զ, ք, ժ, լ, խ, ծ, կ, հնչյունները: Իսկ այս հնչյունները կարելի՞ չէ յերգելով արտասանել:

Հնչյունները լինում են՝ ձայնավոր և բաղաձայն:

Ձայնավոր հնչյուններն են՝ ա, ե, բ, ի, ո, ու:

Բաղաձայն հնչյուններն են՝ բ, գ, դ, զ, ք, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, մ, յ, ն, շ, չ, ռ, ս, վ, ռ, ճ, ղ, փ, փ, ֆ, ք, ք:

49. Արտադրեցեք միայն փոփոխություններ:

Նշաններ

Աա	Բբ	Գգ	Դդ	Եե	Զզ
Ըը	Թթ	Ժժ	Իի	Լլ	Խխ
Ճճ	Կկ	Դդ	Զզ	Ղղ	Ճճ
Վվ	Շշ	Նն	Ըը	Ոո	Ուու
Զզ	Մմ	Զզ	Ոո	Աա	Վվ
Սս	Ռր	Մմ	Փփ	Քք	Քք

Տառերի սովորական շարքը կոչվում է այբուբեն:

Հայոց լեզվի այբուբենն ունի 36 տառ:

Ամեն տառ ունի յերկու ձև՝ մեծատառ և փոքրատառ:

50. Այբուբենից արտագրեցէք միայն մեծատուրք:

51. Այս բաղաձայնները դասավորեցէք այբուբենում աբբ-
ված կարգով՝ այբբենական կարգով:

ժ դ թ փ ք զ ր

բ) Այժմ այբբենական կարգով դասավորեցէք ձայնավոր-
ները:

ա, ո, ի, ե, ը, ու

52. Արտագրեցէք այբբենական կարգով:

Հայաստանի վերանվանված շրջանները

Ամասիայի, Կիրովականի, Ստեփանավանի, Լենինա-
կանի, Մարտունու, Հոկտեմբերյան, Ազիզբեկովի, Մի-
կոյանի:

53. Գրեցէք ձեր դասարանի սովորողների ազգանուններն
այբբենական կարգով:

54. Արտագրեցէք՝ Ուշադրություն դարձրէք ընդգծված բա-
ռերի վրա:

Մեր հանձարեղ ղեկավարին

Մեծ է դարն, ինչպես ովկիան, և ովկիանում ալդ առն-
հուն:

Վերպես արեւ շնեզրական՝ քո անունն է բարձրա-
նում:

Յեւ մղում է մեր դարն առաջ քո անունը հրավառ:
Ո՛ր, հանձարեղ մեր ղեկավար, բարձրախոհ և բարձ-
րանուն:

* յեզր, անեզր, բարձրանում է

Առանձին գործածելիս յեւ-ը կարճ գրվում
է և, փոքր կոչվում է սղագրության նշան:

Սղագրության նշանը մեծատառ ձեւի չու-
նի և գրվում է յերեք տառով՝ Յեւ. որինակ՝
Յեւրոպա:

55. Արտագրեցէք և ընդգծեցէք սղագրության նշանը:

Ստեփան Շահումյանին

Աչքերդ կաղույտ լեթերի նման

Յեւ հոգիդ շուշան,

Սիրտդ խորունկ ծով, ազնիվ, աննման

Ընկեր Շահումյան:

Դու հո չմեռար, նորից կյանք առար:

Յեւ հաղթ քո մահով

Ծլեց ու աճեց մի նոր գաղափար,

Փովեց աշխարհով:

* աչքերդ, հոգիդ, սիրտդ,

56. Այս դասագրքի վերջում արված ուղղագրական բառա-
ցուցակից արտագրեցէք և-ով ու Յեւ-ով գրվող բառերը:

Ուղղագրական բառացուցակը կաղմում են
այբբենական կարգով:

Անձանոթ և դժվար գրվող բառերը սխալ
չգրելու համար ոգսագործեցե՛ք ուղղագրական
բառացուցակը:

57. Ուղղագրական բառացուցակից արտագրեցէք նաև ուղ
անունները:

58. Ուղղագրական բառացուցակում գտեք հետևյալ բա-
ռերը:

Բանվորուհի, հարվածալիններ, աշխատավարձ, ու-
ղիտ, լերջանիկ, բարդ, ոձ, հոլակապ, կարգ, Հայաստան,
խորհրդալին:

* ապիտ, լերջանիկ, բարդ, ոձ, կարգ, հայակապ

VI. ՎԱՆԿ ՅԵՎ ԲԱՌԵՐԻ ՏՈՂԱԴԱՐՁ

(Ը ձայնավորը տղադարձի ժամանակ)

59. Արտադրեցեք վանկերի բաժանած:

Ամեն մի վանկում ընդգծեցեք ձայնավորը մեկ գծով, իսկ բաղաձայնները՝ յերկու գծով:

Պողպատակաւ առաջնորդին

Մեր մարտերի դու մեծ հանճար, ղեկը ձեռքիդ մեջ
առած,

Հոկտեմբերի կարմիր նաւը առաջնորդում ես
առաջ:

Վորժան մեր դեմ հին աշխարհը հորձանավում է
կատաղի,

Քո սուր աչքը՝ ամեն վայրկյան տալիս է նիշ և ուղի:
* առաջնորդի, աշխարհ, վայրկյան

1. Բառի ամեն մի վանկին քանի՞ ձայնավոր է ընկնում:

2. Կո թեկուզ մի վանկ առանց ձայնավորի:

3. Իսկ քանի՞ բաղաձայն է ընկնում ամեն մի վանկին:

Բառն ունենում է մեկ կամ մեկից ավելի վանկեր:

Առանց ձայնավորի վանկ չկա: Ձայնավորը մենակ կարող է վանկ կազմել: Բառի մեջ մորժան ձայնավոր լինի, այնքան ել վանկ կլինի:

Որինակ՝ մարտերի բառը յերեք վանկ ունի, վորովհետեւ նրա մեջ յերեք ձայնավոր կա:

60. Կարգացեք վանկերի բաժանելով:

Արտադրեցեք նախ՝ միավանկ, ապա՝ յերկավանկ և հետո յեռավանկ բառերը:

Առաժներ

Ով չի աշխատում, նա չի ուտում:

Մի ձեռքը ծափ չի տա:

Այսորովա գործը վաղվան մի թողնիր:

Վանկերի թվին նայելով բառերը լինում են՝ միավանկ, (f o r) յերկվանկ, (մա-sիs) յեռավանկ, (դա-սա-րան) և այլն:

Մեկից ավելի վանկ ունեցող բառերը կոչվում են բազմավանկ:

61. Արտադրելիս բաղաձայնի բառերը գծիկներով վանկերի բաժանեցե՛ք:

«Ուրիշի վոչ մի թիզ հողը չենք ուզում: Բայց մեր հողն ել, մեր հողից վոչ մի վերջով վոչ վոքի չենք տա»:
Ասալին

62. Արտադրեցեք և գծիկներով ցույց տվեք, թե հետեւյալ բաղաձայնի բառերը քանի՞ ձեւով կարելի է յերկուտեղա՞ն մասի բաժանել:

Հոկտեմբերիկ, պիտներ, կոմսոմոլիստ, կոմունիստ:
Ուրինակ՝ հոկտեմբերիկ, հոկտեմբերիկ, հոկտեմբերիկ:

63. Արտադրեցեք կարճ տղերով ներքևում ցույց տված ձեւով, վորպեսզի տողադարձ անելը շուտ-շուտ պատահի:

Անդրկովկասի ելեկտրոկայանները

Տես, նայում են Ձագեսի բլուր աչքերը լուսարձակ, կասպից ծովի վրա Բաքվի լուսերի շողերը լայն տարած:

վեցին, Զորագետի վարսերից լույս են ծորում ձորերին,
Քանաքեռից, Ռիոնից լեւնում և զույգ արեգակ:

Որինակ՝

Տես, նայում են Զագե-

սի բլուր աչքերը լուսար—

Գրելու ժամանակ յերբ բառը չի տեղա-
վորվում տողում, նրա մեկ կամ մի քանի
վանկը տակի տողն ենք տանում՝ տողադարձ
ենք անում:

Տողադարձի ժամանակ տողի վերջում գը-
նում ենք տողադարձի նշան (-):

Միավանկ բառերը չի կարելի տողադարձ
անել:

Բազմավանկ բառերը տողադարձ անելիս.

1. Յերբ մեկ բաղաձայն է ընկնում յերկու
ձայնավորների մեջտեղը, ապա՝ այդ բաղաձայնը
սանում ենք հաջորդ տողը: Որինակ՝ սա-րեք, ա-րե-
վի, Հա-րու-թյուն:

2. Յերբ յերկու բաղաձայն է ընկնում ձայ-
նավորների մեջտեղը, ապա՝ մեկը մնում է, մյու-
սը սանում ենք հաջորդ տողը: Որինակ՝ կա-միր,
լեռ-ներ:

3. Յերբ յեւեմ բանաձայն է կողք-կողքի,
ապա՝ յերկուսը մնում է, մեկը սանում ենք հաջորդ
տողը: Որինակ՝ զարթ-ներ, Վարդ-գետ, յերկ-րին:

64. Գծիկներով բառերը յերկուսկան մասի բաժանեցի՛ք:

1) ծաղիկ, բաժակ, քանոն, ուտի՛ն, մատիտ, դասա-
րան, նախագիծ, համադրւմար
Որինակ՝ ծաղիկ ծա-ղիկ:

2) Թատրոն, կարկուտ, կար-միր, բաղ-ոց, աղու-վ,
վոչխար, մահճակալ, շարքացան, սավառնակ
Որինակ՝ Թատրոն, Թատ-րոն:

3) վորական, զարթնել, ընկնել, կանգնել, Աստղիկ
Որինակ՝ Վորսկան, Վորս — կան:

65. Կազմեցե՛ք նախադասություններ հետեւյալ բառերով և
գրեցե՛ք:

Ժողովրդական, կրթություն, արտադրվող արտա-
դրանք, սնային, սնամեք, սնանություն, թոշուններ,
դպրոց, խորհրդային, շինարար, նստաշին, պարզեցված

1) Ընդգծված բաղաձայնների միջով բաժանե՛ք:

2) Բառամիջում բաժանվողը միշտ գրվում է:

Բառամիջում լսվող բաժանվողը միշտ
չի գրվում:

Որինակ՝ արտասանում ենք գըտնել, բայց
գրում ենք գտնել:

Գտնել բառի առաջին վանկը գաղտնավանկ է:

66. Արտագրեցե՛ք վանկերի բաժանած:

Ժողովրդա-կան, կրթ-ություն, ար-տա-դր-վող
ար-տա-դր-րանք, ար-նա-յին, ար-նա-մեք, ար-նա-սու-
թյուն, Թր-շուն-ներ, դպ-րոց, խոր-հրդ-ային, շը-
քա-նը-շան, նըս-տա-շըր-շան, պար-զե-վա-ար-րում

Բառամիջում լսվող բաժանվողը վան-
կերի բաժանելու ժամանակ գրվում է. որ-
նակ՝ դպ-րոց (դպրոց):

67. Արտագրեցեք բառերը տողագարձի համար վանկերի
լուսանամ (բառերը յերկուսկան մասի բաժանամ):

բը-ժըշկութիւն

զը-բաղարան

բժըշկութիւն

զըա-ղարան

բժշկութիւն

զըաղա-րան

Տողագարձի ժամանակ բառամիջի ը ձայ-
նավորը գրվում է միայն առաջին տողի վերջին
վանկում և յերկրորդ տողի առաջին վանկում:

63. Արտագրեցեք՝ բառերը տողագարձի համար վանկերի բա-
ժանելով:

հարստութիւն, նկատմամբ, քննութիւն, դռնբաց,
շրեր, կրթութիւն, արտագրանք, տնտեսութիւն, շքա-
նըշանակիր, նստաշրջան, պարզեմատրում

* քննութիւն, շքանշանակիր, պարզեմատրում

69 Արտագրեցեք կարճ տողերով, վորպեսզի տողագարձ անե-
լը շուտ-շուտ պատահի:

Ձեկյուսկինյանները և մեր հերոս ողաչուները

«Կարելի լի նախանձել այդպիսի հերոսներ ունե-
ցող լերկրին և այդպիսի հայրենիք ունեցող հերոսնե-
րին»:

Յեւ իրոք՝ միայն խորհրդների լերկրում կարելի լի
լենթադրել այն հերոսութիւնը, վորը հայտնաբերեցին
չեկուսկինյանները և նրանց փրկող ողաչուները:

* ողաչու, կարելի լի

VII. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Գրության յեվ արտասանության անհամապատասխա-
նությունը)

1) ԳՐՈՒՄ ԵՆՔ Բ, ԱՐՏԱՍՍՆՈՒՄ Փ:

70. Արտագրեցեք և ընդգծեցեք այն բառերը, վորոնց մեջ
բ տառը փ և արտասանվում:

Դրատախտակը չոր սպունգով յերբեք չսրբեք:

Դասամիջոցներին լուսամուտները բացեք:

* յերբեք, չսրբեք

Շատ բառերում տառերն ինչպես վոր ար-
տասանում ենք, այնպես չենք գրում:

Որինակ՝ յերբեք բառի մեջ գրում ենք բ,
բայց արտասանում՝ փ:

71. Արտագրեցեք և ընդգծեցեք այն բառերը, վորոնց մեջ
բ տառը պ և արտասանվում:

Չորս լեզրալը իրար լեռնվից վազում են և յերբեք
իրար չեն հասնում (սարժա յեղանակները): Կոտորեցեք
ճանճերին, նրանք աղը ու կեղտ են տարածում: Ման-
թաշի ձորերում շատ սառնորակ աղբյուրներ կան:

* յեղբալը, աղբ, աղբյուր

բ-ի

Պարբերել	յերբ	յերբագ
դարբին	նուրբ	համբերել
իբրեմ	հակոբ	համբուրել
յերբեմն	Աերոբ	արբել

բ-պ

աղբ աղբյուր յեղբայր

73. Արտագրեցեք և գծիկների տեղը դրեք բաց քողած տառերը:
Դար — ին Գա — ընի Սերո — լանի լեզ — ալը՝ Հակո — ը
ի — բեմ ուսման գերազանցիկ գովասանագիր ստացավ:
Յեր — եք չհամ — ուրեք յերեխաներին:

74. Ուղղագրական բառացուցակում գտեք այն բոլոր բառերը
Վերոնց մեջ ք տառը չի համապատասխանում իր արտասանությանը:

2) ԳՐՈՒՄ ԵՆՔ Դ, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ Թ:

75. Արտագրեցեք և բնագծեցեք այն բառը, վերի մեջ գ
տառը արտասանվում է է:

Կոլանտեսուլթյան դաշտում

Ամռան շոգերին
Վտակեղոծ դաշտում
Մեծ կոմբայններով
Ցարեն են հնձում:

* Բ

գ-վ

կարգ	մարգար	արգելի
միւրգ	մարգարիւր	մրգեղեն
յերգ	Աարգիս	պարգեմալարել
	հոգնել	գոգնուց
	նորոգել	հոգնակի
	ոգնել	ոգրակար
կարագ	վուգվել	Սվագ
մարագ	մագել	Գրիգոր
ուրագ	հագնել	Թագուհի

77. Արտագրեցեք և գծիկների տեղը դրեք բաց քողած
տառերը:

Ա՛յ տղա, անունդ Ավա-, քեզ կուտեցնեմ մեզր ու
կարա —: Նորո — ման ցեխի ալա — վարպետ Սար — իս Գրի-
— ուլանը պար — եվտարվեց պատվոգրով: Ծա-ում է արեվը:
Մար = արիտն ու Թա — ուհին բամբակի զաշտումն են:

3) ԳՐՈՒՄ ԵՆՔ Դ, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ Թ:

78. Արտագրեցեք այն բառերը, վերոնց մեջ օղագրով աղագ
ված տառերը չեն համապատասխանում իրենց հնչյուններին:

Կարմիր հորքը մնաց հորդ անձրեվի տակ:
Վարդերը փչացրին խաղողի վառքը:

* հորդ, վառք

79. Արտազրեցեք այս ուղղագրական բառացուցակը:

Դ-Բ		
անդամ	ժողովուրդ	ող
արդեն	խնդրել	չորրորդ
բարդ	խորհուրդ	զարդել
բերդ	կարդալ	վառուդ
դրում	կենդանի	շարդան
զարդ	կոկորդ	վորդ
ընդարշակ	հորդ	վորդի
ընդհանուր	ճանապարհորդ	խրսնորդ
Թաղախու	մարդ	վրդովել
թակարդ	յերբորդ	խառորդ

80. Կազմեցեք նախադասություններ վերևում արված բառերով և գրեցեք:

81. Ուղղագրական բառացուցակում գտեք հետևյալ բառերը: անդամ, զարդ, ընդունակ, Վարդան, լերկորդ

82. Արտազրեցեք և գծիկների տեղը դրեք բաց բողոմ քառերը:

Անշեղորեն ավելանում է խորհրդ—ալին Միության ժողովուրդ—ների բարեկամությունը: Մեր հերոս ու աշունները փրկեցին անհետացած վորսոր—ներին: Մենք ար—են կար—ում ենք ըն—աբձակ և բար— գրվածքներ:

4) ԳՐՈՒՄ ԵՆՔ Զ, ԱՐՏԱՍՍՆՈՒՄ Զ:

83. Արտազրեցեք և ընդգծեցեք զ ասուը, վառ արտասանված վում և չ:

Առաջին դասը հայերեն եր, իսկ վերջին դասը՝ թվաձ բանութուն: Նախադասության վերջում դրվում է վերջակետ: Կոմս ունի լախ մեջք:

* առաջին, վերջին, վերջ, մեջք, հաջել

84. Արտազրեցեք այս ուղղագրական բառացուցակը:

Չ-Ն			
Ուղ բաղաչալմաներից հետո, յետև լսվում է չ, մեծ մասամբ գրվում է զ:			
ԲԶ	արզ	աղջիկ	ՂԶ
	բրդել	ամբողջ	
	մրգյուն	եզ	
	յերզանիկ	չղջիկ	
արզ	վերզ	վողջուն	չղջիկ
ազ	հազել	ժիզակեր	
առաջարկ	հազող	ժիզար	
առաջին	ժեզ	ժիզոց	
առաջնորդ	ժեզի	գիրդ	
իզնել	ժիզակ	իրդ	

85. Նախագասություններ կազմեցե՛ք զ—յ ուղղագրական բառացուցակի բառերով:

86. Արտագրեցե՛ք և գծիկների տեղը դրե՛ք բաց քողած տառերը:

Վոդ—ույն մեր սիրելի առա—նորդ ընկ. Ստալինին: Մեր լերկրում ամբող— աշխատավորությունն ապրում և լեր—անիկ կյանքով:

5) ԳՐՈՒՄ ԵՆՔ 2, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ 3:

87. Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք ձ տառը, վոր արտասանվում և ց:

Մեր նոր դպրոցական շենքերը բարձր ու ընդարձակ են և ունեն հանդերձարաններ: Կիտրոնը և նարինջը արևադարձային բույսեր են:

* բարձր, ընդարձակ, հանդերձարան, արեվադարձ

88. Արտագրեցե՛ք այս ուղղագրական բառացուցակը:

Յ Կ

Որ բաղադրանք է նրա, յերե լավում է

Կ, ինչ մասամբ գրվում է Յ

Բ Յ  դերձակ	արեվարարչ արչագանձ արչակ: արչակուրդ արչամագրուրչումն բարչեղ բարչր' դարչյալ	դերձակ ընդարչակ խուրչ համարչակ ժամբարչում խանդերչարան վարչ փորչ
--	---	--

89. Արտագրեցե՛ք և գծիկների տեղը դրե՛ք բաց քողած տառերը:

Շուտով մենք սովորելու լինք ար—անագրութուն գրել: Դեր—ակ Համբար—ումը կարգում և թե ար—ակ և թե չափածո գրվածքներ: Մեր աշխատավորների աշխատավար—ը շարունակ բար—լանում և:

6) ԳՐՈՒՄ ԵՆՔ 2, ԱՐՏԱՍԱՆՈՒՄ Խ:

90. Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք դ տառը, վոր արտասանվում և խ: Ուղար Վանապատի նամիս է: Աղբն ու կեղտը հիվանդութուն են տարածում: Չղջիկը կրծող է, բայց թռչում է: Ստախանովականները հաղթանարում են բոլոր տեսակի դժվարութունները:

* ուղտ, աղբ, կեղտ, չղջիկ հաղթանարել

91. Արտագրեցե՛ք այս բառերը այբբենական կարգով:

աղբ

աղբյուր

յեղբայր

աղջիկ

ամբողջ

չղջիկ

փողոցյն



բուդի

կաղրել

չղթա

դեղձ

դեղշանիկ

խաղցած

խաղցր

92. Արտագրեցե՛ք և գծիկների տեղը դրե՛ք բաց քողած տառերը:

Կուշտը քա—ցածին մանր կերդի: Մեղրը քա—ծը և շաքարից, քունը մեղրից, շաքարից, Հալաստանի

լեռները հարուստ են ա—բլուրներով: Թռչնապահ Դե—
ձանիկը շատ է սիրում դեղձանիկ:

7. Հ ՏԱՌԸ Բ ԲՍՂԱԶՍՅՆԻՑ ՀԵՏՈ

93. Արտազրեցեք և ընդգծեցեք ն տառը ք բաղաձայնից
հետո:

Շնորհակալությունն ընկ. Ստալինին մեր ուրախ և
լերջանիկ կյանքի համար:

Խորհուրդները մեզ ավելցին լավ ճանապարհներ:

Խորհրդային Նոր Սահմանադրութիւնը ամենադե-
ժակրատիկն է ամբողջ աշխարհում:

94. Արտազրեցեք բառերը այբբենական կարգով:

Ճ քառու բ բաղաձայնից հետո
մեծ մասամբ չի արդարանալու:

աշխարհ խոնարհ խորհուրդ
ժանապարհ արեամարեղ շնորհակալությունն

95. Արտազրեցեք և գծիկների տեղը դրեք բաց բոլորած
տառերը:

Յուրաքանչյուր խոր—ըղալին քաղաքացու առջև բաց
է նոր կյանքի ճանապարհ—ը: Կարմիր մարտիկները գրո-
շակները խոնար—եցին հերոս սահմանապահի թարմ շի-
րիմի առաջ: Մեր համարձակ ողաչուններն արհամար-
քում են վախն ու լերկուղը:

96. (Ստուգողական աշխատանք). Արտազրեցեք և գծիկների
տեղը դրեք բաց բոլորած տառերը:

Յեր—դար—ին Հակո—ի լեղ—ալին լեկավ, ադ-
—լուրն ար—են նորո—ել ելին: Մար—արի ավա—ա—ջիկ
Մար—արիտը պար—եվատրվեց գրքերով: Նոր Սահմա-
նադրութեամբ մեզ մոտ մտցվում է ընդ—անուր, հավա-
սար, ուղղակի և գաղտնի քվեարկութիւն: Բոցավառ
վո—ուշն մեր լեր—անիկ սերնդին:

Լույն ճանապարհ—առա—ավուրներին:

VIII. ԳՐԲՈՎ ՅԵՎ ԼՐԱԳՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

97. Պատմեցեք ձեր կարգացած գրքերից վերելե մեկի հա-
ժառոտ բովանդակությունը հետեվյալ ծրագրով:

- 1) Ի՞նչ է գրքի անունը և ո՞վ է հեղինակը:
- 2) Ինչպիսի՞ գրվածք է:
- 3) Ինչի՞ մասին է խոսվում այդ գրվածքում:
- 4) Հավանեցի՞ք, թե՞ վոչ. ինչո՞ւ:

98. Արտադարձրեցեք ընթերցանության համար մի առաջ-
ձին ծոցատետր պահեցեք և նրա մեջ գրեցեք ձեր կարգացած
գրքերի մասին հետեվյալ ձևով:

ՅԵՐԸ ԵՄ ԿԱՐԳԱՅԵԼ.—

Ո՞վ է գրել՝ հետիմնակը (կազմողը, թարգմանիչը, փո-
խադրողը).—

Գրքի տեմունը (ինչպես է կոչվում).—

Ո՞վ է հրատարակել (հրատարակչությունը).—

Վճարտեղ և վճր թվին է հրատարակվել (տպագրվել).—

Վճր տպագրութիւնն է (հրատարակութիւնը).—

Քանի՞ որինակ է տպվել (տպւմը).—

Քանի՞ եջ է.—

Գինը.—

Ինչպիսի՞ գրվածք է (պատմվածք, հեքիաթ, գյուղա-
քրնեստական գրույց).—

99. Ձեզ անհրաժեշտ գիրքն ընտրելու համար բացի գրքի
տեմունաթերթից ծանոթանալուց, պետք է ծանոթանալ նաև գրքի
առաջաբանին և ցանկին կամ բովանդակությանը:

Նախեցեք այս գրքի բովանդակությանը և ասացե՛ք՝

Քանի՞ մասից է կազմված աշխատագիրքը:

Յուրաքանչյուր մասը քանի՞ դուրս ունի:

Վճր եջերում են գտնվում նախադասություն և գոյական
գլուխները:

100. Ծանոթացնեք ձեր դպրոցում եւ ձեր տներում ստացվող թերթերին ու հանդեսներին (ժուռնալ) եւ պատասխանեցեք հետեւ-վյալ հարցերին.

1) Ինչպե՞ս են կոչվում այն պարբերականները, վո-րոնք լույս են տեսնում ամեն օր, յերկու օրը, վեց օրը, ամիսը մեկ անգամ:

2) Ի՞նչ որաբերքեր, յերկուրյա, վեցուրյա, լրագրեր գի-տեր:

3) Ինչպիսի՞ ավսագրեր գիտեր:

4) Ինչպիսի՞ մանկական եւ պատանեկական հանդես-ներ գիտեր:

5) Ինչպե՞ս եւ ձեր դպրոցի պատի թերթի անունը:

6) Ի՞նչ բաժիններ ունի ձեր դպրոցի պատի թերթը:

7) Ո՞ւմ որգանն եւ ձեր դպրոցի պատի թերթը:

101. Պատի թերթի համար մի հոգված գրեցեք ձեր դասա-րանի գերազանցիկների մասին:

Նախ՝ ընտրեցեք վերնագիրը:

Աշխատեցեք, վոր այն լինի կարճ եւ պարզ:

Ապա կազմեցեք հոգվածի պլանը, թե նախ՝ ինչ պի՞ի գրեք, հետո՝ ինչ եւ ինչպե՞ս պետք եւ վերջացնեք:

Յերբ պլանով եք գրում՝ վոչ մի բան բաց չեք թողնում եւ ավելորդ կրկնություններ չեք անում:

Թղթակցության հիմքը պետք եւ կազմի վորեւի՞ իրական յեղելություն, ստուգված փաստ:

Թղթակցությունը վոչ միայն պիտի ար-ձանագրի փաստը, այլեւ գնահատի այն եւ հա-ճախ անի գործնական առաջարկներ:

Թղթակցությունները յերկար չպետք եւ գրեր Նախադասությունները պետք եւ կարճ լինեն:

IX. ԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՎԵՐ

(Ստացական յեվ լիազորագիր)

102. Արտագրեցեք այս ստացականը:

Արապական

Արապա շենիմականի մանված-
ֆային գործարանի դրամարկից
1936թ. հուլիս ամսվա աշխատավարձ
յերեմի հարցուր (300) ուսրլի

Աղասի ջուկասյան

1936թ. հուլիսի 21-ին

Շենիմական

Ստացականը գրվում եւ այսպես.

Նախ՝ գրվում եւ վերնագիրը (ստացական) տողի մեջտեղում, ապա՝ նոր տողից (մի քիչ խորից) գրվում եւ, թե ումի՞ց եւ ստացված եւ ի՞նչ եւ ստացված. հետո, յեթե պահանջվում եւ, գրվում եւ նաեւ՝ ինչի՞ համար եւ ստացված:

Վերջում՝ ձախ կողմում գրվում եւ ստա-ցողի անունը եւ ազգանունը, իսկ աջ կողմում նոր տողից՝ արիմ ամիսը եւ ամաթիվը, յեր-բեմն նաեւ տեղը (ֆաղաֆ, գյուղ):

103. Ինքներդ մի ստացական գրեցե՞ք:

104. Արտագրեցե՞ք:

Լիազորագիր

Լիազորում եմ Միղամի Միրաշևսի մարգարյանին մուսայեյյանի գյուղխորհուրդից ստանալու 1936 թ. ոգոստոս ամսի 15-ից հասանելի աշխատավարձը:

Արեւիան Դուխաննիսյան
1936 թ. ոգոստոսի 15-ին
մուսայեյյան

105. Գրավոր պատասխանեցե՞ք այս լիազորագրի վերաբերյալ հետեւյալ հարցերին.

1. Ո՞ւմ են լիազորում:
2. Ի՞նչ է լիազորվում ստանալ:
3. Ո՞վ է լիազորում:
4. Յե՞րբ և վերահղ է դրված լիազորագիրը:

Լիազորագիրը գրվում է այսպես.

1. Նախ՝ գրում են, թե ում են լիազորում:
2. Ի՞նչ բանի համար են լիազորում:
3. Ապա՝ նոր տողի աջ կողմում՝ լիազորողի ստորագրությունը:
4. Իսկ ձախ կողմը, նախ՝ տարին, ամիսը և ամսաթիվը, ապա, սրա տակը՝ այն տեղի (հաղախի կամ գյուղի) անունը, վորտեղ գրվել է լիազորագիրը:
5. Լիազորագիրը գրելուց հետո լիազորողի ստորագրությունը պետք է հաստատել տալ վորեւի հիմնարկում:

106. Ինքներդ ինքնուրույն կերպով լիազորագիր գրեցե՞ք:

107. (Ստուգողական աշխատանք). Առանձին թերթի վրա (առանց նայելու ձեր դասագրքի կամ տետրում գրած որինակներին) ինքնուրույն կերպով գրեցե՞ք մինչև այժմ ձեր սովորած գրության գործնական ձևերից՝

հասցեներ,

նամակ,

հեռագիր,

ստացական,

լիազորագիր:

X. ՅԵՆԹԱԿԱՆ ՅԵՎ ՍՏՈՐՈԴՅԱԼԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Համառոտ նախադասություն)

108. Կարգացեր:

Քանի նախադասությունից ե կազմված այս պատմվածքը:
Իսկ քանի բառից ե կազմված յուրաքանչյուր նախադասությունը:

Կոլանտեսությունում

Կոլանտեսությունները ամրանում են: Յեկամուտը ավելանում ե: Տրակտորիստները վարում են: Քաղվորները քաղում են: Կոլանտեսականները հնձում են: Հովիվը արածացնում ե: Կթվորները կթում են:

Նախադասությունում իսկադող բառերը կոչվում են նախադասության անդամներ:

109. Նախորդ պատմվածքի նախադասությունների համար գրեցե՛ք հարցերի պատասխանները մեկական բառով:

Հարցեր

- 1) Ո՞վ ե արածացնում:
- 2) Ովքե՞ր են կթում:
- 3) Ի՞նչը ավելանում ե:
- 4) Ի՞նչերը ամրանում են:

Պատասխաններ

- Հովիվը:
Կթվորները:
Յեկամուտը:
Կոլանտեսությունները:

Նախադասության այն անդամը, վորը ցույց ե տալիս մի բան անող կամ լինող առարկան, կոչվում ե յենթակա:
Յենթական պատասխանում ե ո՞վ (ովե՞ր) կամ ի՞նչ (ինչե՞ր) հարցերին:

110. Նախորդ աշխատանքի ձեզով նույն պատմվածքի նախադասությունների համար գրեցե՛ք հարցերի պատասխանները մեկական բառով:

Հարցեր

- 1) Հովիվն ի՞նչ ե անում:
- 2) Կթվորներն ի՞նչ են անում:
- 3) Յեկամուտն ի՞նչ ե լինում:
- 4) Կոլանտեսությունները ի՞նչ են լինում:

Պատասխաններ

- Արածացնում ե:
Կթում են:
Ավելանում ե:
Ամրանում են:

Նախադասության այն անդամը, վորը ցույց ե տալիս, թե յենթական ի՞նչ ե անում կամ ի՞նչ ե լինում, կոչվում ե ստորոգյալ:

Ստորոգյալը պատասխանում ե ի՞նչ ե անում կամ ի՞նչ ե լինում հարցերին:

111. Արտագրեցե՛ք նախադասությունները. յենթական ընդգծեցե՛ք մեկ գծով, իսկ ստորոգյալը՝ յերկու գծով:

Զորահանդես

Դրոշակները ծածանվում են: Հրամանատարը կարգադրում ե: Զորահանդեսն սկսվում ե: Նվազախուժը նվազում ե: Սովառնակները թռչում են: Հետեվակները քալում են: Հրետանավորները գնում են: Հեծելակները արշավում են: Տանկերը սողում են:

112. Կետերի տեղը դրեք հարմար յեմքականեք:
 Կթվորը կթում ե: փայլատակեց:
 պարզեփառվեցին: բարձրացավ:
 հնչում ե: հորդացավ:

(գետը, փոթորիկ, կայծակը, հովիվները, զանգը)

113. Կետերի տեղը դրեք հարմար ստորոգյալներ:

Օրեվը ծագում ե: լեռում ե:
 շչում ե: աշխատում են:
 կենդանանում ե: վարում են:

(փողոցը, շալիք, աշխատանքը, տրակտորները, կոլ-
 սրեսեսականները)

Միայն յենթակայով և ստորոգյալով կազմե-
 րված նախադասությունը կոչվում ե համառոտ
 նախադասությամբ:

Համառոտ նախադասության գծագիրը

Ենթակա	ստորոգյալ
աշխատեցին	կարդում ե

XI. ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ

(Ընդարձակ նախադասություն)

114. Արտագրեցեք այս նախադասությունները:
 Յենթական ընդգծեցեք մեկ գծով, իսկ ստորագյալը՝ յերկու գծով:
 Տրակտորիստ Մարջանյանը վարում ե դաշտը: Կոլտըն-
 տեսության հովիվը հոտն արածացնում ե հանդում: Հար-
 վածային կթվորները կովերը խնամքով են կթում:
 Վճր բառերն են այստեղ պարզաբանում՝ լրացնում յեն-
 թականների միտքը:
 Իսկ վճր բառերն են լրացնում ստորոգյալների միտքը:
 Յերը ե ավելի լրիվ դառնում միտքը՝ այդ լրացնող բառե-
 րով, թեառանց այդ լրացումների:

Յենթականի և ստորոգյալի միտքը պարզա-
 բանող, լրացնող անդամները կոչվում են լրա-
 ցումներ:

Առանց յենթականի և ստորոգյալի նախա-
 դասությունը լրիվ չի կարող լինել: Յենթական
 ու ստորոգյալը նախադասության գլխավոր ան-
 դամներն են:

Առանց լրացումների նախադասություն կա-
 րող ե լինել: Լրացումները նախադասության
 յեղորդական անդամներն են:

115. Արտագրեցեք լրացումներ ունեցող նախադասություն-
 ները:

Հրդեհն ընդարձակվել եր: Այրվում եր նավթային
 աշտարակը: Հրդեհաշիջներն աշխատում ելին: Թանձր
 ծուխը արդեն շրջապատել եր ամբողջ տունը: Կրակը տա-
 րածվում եր անասելի արագությամբ: Տիրում եր դժո-
 խային խառնաշփոթություն:

Ձ. Հայոց լեզու, կրթագրագիտության համար

Լրացում ունեցող նախադասութիւնը կոչ-
վում է ընդարձակ նախադասութիւն:

115. Արտագրեցէք գծագրերում արված նախադասութիւն-
ները սովորական ձեւով՝ տղերով:
Նախադասութիւնն սկսեցէք մեծատառով, նախադասութեան
վերջում վերջակէ՛ս դրեք:
Նախադասութիւնների մեջ ընդգծեցէ՛ք լրացումները:

գերապանայիկ

աշակերտը պարգեւատրուեց

աշխատավորները չմիջեցին

աշխատանքի

117. Գծառերով արտահայտեցէք հետեւյալ նախադասու-
թիւնները:

Սրանք գնաց:

Մեր Սրանք գնաց:

Սրանք գնաց դպրոց:

Մեր Սրանք գնաց դպրոց:

118. Առաջէք համառոտ նախադասութիւններ և դարձրէք
ընդարձակ նախադասութիւններ, նախ՝ միայն լեռնական լրա-
ցընելով, ապա՝ միայն ստորոգյալը և հետո՝ թե՛ լեռնական և թե՛
ստորոգյալը:

119. Առաջէք մի քանի ընդարձակ նախադասութիւններ
և ապա՝ դարձրէք համառոտ նախադասութիւններ՝ լրացումները
հանելով:

120. Արտագրեցէք ընդարձակ նախադասութիւնները՝ հար-
ցերի տեղ լրացումներ դնելով:

Յենթախի լրացումներն ընդլծեցէք մեկ գծով, իսկ ստորո-
գյալի լրացումները՝ յերկու գծով:

Լավագույն հարվածայինները

(Ինչի՞) շէպը (վո՞րեղ) լսվեց, (Ինչպիսի՞) հարվա-
ծայինները (վո՞րեղից) չեն հեռանում: (Ինչպիսի՞) բրիգա-
դը (ինչպե՞ս) է աշխատում:

121. Նախ՝ արտագրեցէք լեռնականները և ապա՝ ստորոգյալնե-
րն իրենց լրացումներով:

Լրացումներից հետո փակադճերում գրեցէք համապատաս-
խան հարցեր ներքեւում ցույց արված ձեւով:

Արտասահմանից հալ աշխատավորները ներգաղթում
են Հայաստան: Խորհրդային իշխանութիւնը ներգաղթող-
ներին ավել է մեծ արտոնութիւններ: Մեր նոր քաղա-
քացիներն ուրախ և յերջանիկ են ապրում: Ներգաղթող-
ների համար կառուցվել են հրաշալի ավաններ: Նուրա-
բաշենում կառուցվելու լին ընդարձակ ջրանցք: Մյուս
ավաններում կառուցվելու լեն դպրոցներ, մանկապար-
տեղներ, մանկամսուրներ:

122. Ի՞նչ առարկաներ եք տեսնում տանը, դպրոցում, դաշտում, անտառում, փողոցում:

Ասացեք ո՞վ ե նա և ապա՝ ի՞նչ ե այն հարցերին պատասխանող առարկաների անուններ:

Որինակ՝

Ո՞վ ե նա

Ի՞նչ ե այն

բժիշկ, բանվորունի, Աստղիկը... աթոռ, գիրք, ծառ...

123. Կարդացեք և կետերի տեղը ավելացրեք այն բառը, վորը ցույց ե տալիս, թե թված առարկաներն ի՞նչ են:

Տրակտորիստը, կոմբայնավարը և շափերը մարդիկ են:

Ուղտը, գոմեշը, առյուծը * * * *

Առվույտը, լեռնքնուկը և սեղը * * * *

Մկրատը, ուրազը և սղոցը * * * *

124. Արտագրեցեք բնության յերեվույթներ ցույց տվող բառերը:

Փոթորիկ

Փչեց սաստիկ փախին: Ընկան անձրեվի խոշոր կաթիլներ, և հանկարծ կայծակը փայլատակեց: Ամպը վորտաց: Անձրեվն սկսվեց և քանի դնաց՝ հորդացավ, սաստկացավ:

125. Արտագրեցեք նախ՝ այն բառերը, վորոնք ցույց են տալիս բնության յերեվույթներ (կայծակ, փոթորիկ), իսկ ապա՝ այն բառերը, վորոնք ցույց են տալիս դեպքեր կամ հասարակական յերեվույթներ (հեղափոխություն, ժողով):

անձրեվ, հրդեհ, ընտրություն, գործադուլ, կայծակ, հեղափոխություն, սառնամանիք, խավարում, զարուհ, վորոտ, կռիվ, աշուն, ցուրտ, ժողով, քամի, տաքություն, պարապմունք, ձմեռ, ցույց, մրցում

Մարդիկ, կենդանիները, իրերը, բնության յերեվույթները, դեպքերն ընդհանուր կերպով կոչվում են առարկաներ:

Առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական:

126. Արտագրեցեք և ընդգծեցեք գոյականները:

— Ահա մեր տունը, — ընկերուհու հետ սենյակի դռնից ներս մտնելով՝ ասաց Լենինականի մանվածքային դործարանի բանվորունի Հայկուշը:

— Ոհո, ասա՛՛ կարգին պարտախ պես շենքումն ես ապրում, ելի:

— Հապա, Սիրվադդ, չես կարող յերեվակալել, թե վորքան եմ ուրախացել նոր սենյակ ստանալու համար: Այս շենքի մեջ ամեն հարմարություն կա: Ամեն տնգամ, վոր սենյակիս ելեկտրական լամպը վառում եմ, սիրտս փառավորվում ե, սենյակիս պատերը կարծես ծիծաղում են դեմքիս: Մանավանդ՝ յերբ աշխատանքից հոգնած դալիս եմ, մտնում լողարան ու հանգիստ լողանում եմ ինձ համար իսկ ինչպիսի հրաշալի բնակարաններ ունեն ընտանիքավորները...

Անձ ցույց տվող գոյականների համար դնում են՝ ո՞վ, ո՞ւմ, ումի՞ց, ումո՞վ հարցերը:

Մնացած գոյականների համար դնում են՝ ի՞նչ, ինչի՞, ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ հարցերը:

127. Արտագրեցեք հոգվածից գոյականները:

Մ. րէփն ու ծիածանը

Անձրեվից հետո ծագեց արեւին ու ծիածան հա-
ւելց:

— Նայիր ինձ, քեզնից գեղեցիկ եմ, — ասավ ծիածանն արեվին, — տես քանի գույն ունեմ. կանաչ, կարմիր, կապույտ, դեղին ..

—Բայց գիտե՞ս փոր յես եմ քեզ այդքան զույն
տվողը, — ասավ արեւոր:

— Դ՞նու... սուտ է, — ժպտաց ծիւծաւնը:

— Սո՛ւտ ե, — ասով արեմն ու մտավ ամպի տակ։
Արեմն ամպի տակ մտավ թե չե, ծիածանն էլ անհետացավ։

123. Գտե՞ք հակառակ նշանակութիւն ունեցող գոյականներ և արտագրեցէ՛ք:

պատերազմ — խաղաղություն ծերութուն — . . .

դառնութիւն — . . . , տաքութիւն — . . .

կյանք — . . . աշխատասիրութ,ուն— . . .

հիվանդութուն — լավութուն —

(վասություն, ծուլություն, ցրտություն, յերիսասար-
դություն, առողջություն, մահ, փաղցրություն)

Այն բառերը, փորոնք նշանակությամբ
բոլորովին իրար հակառակ են, կոչվում են
հակառիկ բառեր:

129. Բահալոր ասացէք հակաճիւղ զոյականհեր:

սկիզբ —	թշնամութ,ուն —
առաջադիմութ,ուն —	աշխատանք —

130. *Լրացրէ՞ք ե գրեցէ՞ք:*

Նույն նշանակութիւնն ունեցող գոյականներ

weis - p m c $\delta f_{im} = \dots$

27/3 1899 — 4179 —

(ննդուկ, պարանոց, պոռո)

Այն բաները, վորոնք նշանակութեամբ բոլորովին նույնն են, կոչվում են նույնանիւ բաներ:

131. Բանավոր ասացեք նույնանիւ գոյականներ:

Նույնանիշ գոյականներ

պատուհան — զգեստ —

լեռ — ♦♦♦♦♦ դպրոց — ♦♦♦♦♦

XIII. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

(Գաղափար հնչյու նափոխության մասին)

132. Յույց տվեք գոյականները և նրանց թիվը I և II հատվածներում:

Զվոդ թռչուն

Զվող թռչունը կերակրվում է մոծակով, թրթուռով,
աարդով, վերդով:

Աշխատելով զբաղի տաք լերկեր են չվում սաղմակը, ծեծեռնակը, կոտենը, արծիվը, բազենս:

Չվող թռչուններ

Չվող թռչունները կերակրվում են մոծակներով, թրթուռներով, սարգերով, վարդերով:

Աշնանը դեպի տաք լեռներ են չվում սարյակները, ծիծեռնակները, կուռնակները, արծիվները, բազեները:

Գոյականներն ունեն յերկու թիվ՝ յեզակի և հոգնակի:

Յեզակին ցույց է տալիս մեկ առարկա:

Հոգնակին ցույց է տալիս նույն տեսակին պատկանող մեկից ավելի առարկաներ:

133. Լրացրեք այս միավանկ բառերի հոգնակին և գրեցե՛ք:

Յեզակի

գլուղ

արտ

ձոր

վեճ

Հոգնակի

գլուղեր

.....

.....

.....

134. Լրացրեք այս բազմավանկ բառերի հոգնակին և գրեցե՛ք:

Յեզակի

ակումբ

մանկամաս

մանկապարտեզ

դպրոց

Հոգնակի

ակումբներ

.....

.....

.....

Հոգնակի կազմելու համար միավանկ բառերին ավելացնում ենք եր, իսկ բազմավանկներին՝ ներ:

135. Լրացրեք ն-ով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին և ապա՝ գրեցե՛ք:

Յեզակի

ընթերցարան

տնտեսություն

կույտնաբանական

կոմյերիտական

գործարան

Հոգնակի

ընթերցարաններ

.....

.....

.....

.....

Ն-ով վերջացող բազմավանկ բառերի հոգնակին գրվում է յերկու ն-ով:

136. Լրացրեք և գրեցե՛ք:

զիրք — գրքեր

գիծ —

բիծ —

գիր —

թուղթ — թղթեր

գունդ —

առն —

բռն —

Միավանկ բառերի ի, ու ձայնավորները հոգնակիում կարող են փոխվել ր-ի, վոր չի գրվում. որինակ՝ լիճ — լճեր, ջուր — ջրեր:

137. Կազմեցե՛ք հետևյալ գոյականների հոգնակին:

ակ, ձուկ, մուկ, նուռ, դուռ, լեռ, բեռ, կուռ, գառ, թուռ, փուռ, ձեռ, վոռ

Մի քանի միավանկ գոյականներ հոգնակիում ստանում են ներ՝ փոխանակ եր ստանալու. որինակ՝ բեռ — բեռներ:

138. Արտագրեցե՞ք՝ ընդգծված գոյականները լեզակի դարձ-
նելով:

Գարնանացանի համար

Տանենք սրակսուներ, զութաններ, շաւաղաններ...

Գարնան ցանքսերը մեզ են սպասում:

139. Արտագրեցե՞ք՝ ընդգծված գոյականները հոգնակի դարձ-
նելով:

Տրակտորային գործարան

Տրակտորային գործարանը սրակսոր սրակսորի յետե-
վից ուղարկում է կոլտնտեսութուններին: Կոլտնտեսու-
թյուններում դաշտերը վարում են սրակսորով, ցանում են
